



Ընդհանուր
ակնարկ

Թափանցիկություն

61 /100

(Բաց բյուջեի ինդեքսը)

Հանրային
մասնակցություն

6 /100

Բյուջեի
վերահսկողություն

50 /100

Հետազոտության մասին

Կառավարության կողմից բյուջեի մասով կայացվող որոշումները՝ ինչ հարկեր գանձել, ինչ ծառայություններ մատուցել և որքան պարտք վերցնել, կարևոր հետևանքներ ունեն հասարակության բոլոր անդամների համար: Երբ կառավարությունները հանրությանը տրամադրում են տեղեկատվություն և իմաստալից ուղիներ՝ վերը նշված որոշումներում ներգրավվելու համար, մենք կարողանում ենք ավելի արդյունավետորեն ապահովել, որ հանրային միջոցների ծախսվեն հանրային շահերի համար:

Բաց բյուջեի հետազոտությունը (ԲԲՀ) աշխարհի միակ անկախ, համեմատական և փաստահեն հետազոտական գործիքն է, որտեղ կիրառվում են միջազգայնորեն ընդունված չափանիշներ գնահատելու համար պետական բյուջեի մասին տեղեկատվության հանրային հասանելիությունը, հանրության համար պետական բյուջեին առնչվող բյուջետային գործընթացին մասնակցելու՝ օրենքով սահմանված հնարավորությունները, և բյուջետային վերահսկողության ինստիտուտների, այն է, օրենսդիր և ազգային հաշվեքննիչ մարմինների, դերը:


Հետազոտությունը օգնում է տեղական քաղաքացիական հասարակությանը գնահատել և կառավարության հետ քննարկել հանրային միջոցների հաշվետվությունները և այդ միջոցների օգտագործման հարցերը: ԲԲՀ-ի այս 8-րդ հրատարակությունն ընդգրկում է 120 երկիր:

Լրացուցիչ տեղեկությունների, ներառյալ՝ ամբողջական ԲԲՀ մեթոդաբանության, 2021 թվականի գլոբալ և տարածաշրջանային հաշվետվությունների, բոլոր հետազոտված երկրների արդյունքների և տվյալների հետազոտման համար տե՛ս

www.internationalbudget.org/open-budget-survey

Թափանցիկություն

ԲԲՀ-ի այս մասը չափում է այն տեղեկատվության հանրային հասանելիությունը, որը վերաբերում է կառավարության կողմից հանրային ռեսուրսների հավաքագրմանն ու ծախսմանը: Այն գնահատում է ութ հիմնական բյուջետային փաստաթղթերի **առցանց հասանելիությունը, արդիականությունը (ժամանակին հրապարակումը) և համապարփակությունը**՝ օգտագործելով 109 հավասար վիճակագրական քաշ ունեցող ցուցիչներ, և գնահատում է յուրաքանչյուր երկիրը 0-ից 100 սանդղակով: **Թափանցիկության 61 կամ ավելի գնահատականը ցույց է տալիս, որ երկիրը, ամենայն հավանականությամբ, բավականաչափ նյութ է հրապարակում՝ աջակցելու բյուջեի մասին տեղեկացված հանրային բանավեճին:**



Հայաստանի թափանցիկության միավորը **61** է (100 միավորից):

Թափանցիկությունը Հայաստանում՝ այլ երկրների համեմատ

Համաշխարհային միջինը	45
Վրաստան	87
Ռուսաստան	73
Ղազախստան	63
Ղրղզստանի Հանրապետություն	62
Հայաստան	61
Մոնղոլիա	60
Թուրքիա	55
Տաջիկստան	16

0 61 100
Անբավարար Բավարար

Բյուջետային փաստաթղթերի հանրային հասանելիությունը Հայաստանում

- Հասանելի է հանրությանը
- Հրապարակվում է ուշ, կամ չի հրապարակվում առցանց, կամ հրապարակվում է միայն ներքին օգտագործման համար
- Չի պատրաստվում

Փաստաթուղթ

2021

Նախաբյուջետային ուղերձ (ՄԺԾԾ)	●
Գործադիր բյուջետային առաջարկ (պետական բյուջեի նախագիծ)	●
Հաստատված բյուջե	●
Քաղաքացու բյուջե	●
Եռամսյակային կատարման հաշվետվություններ	●
Կիսամյակային հաշվետվություն	○
Պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն	●
Պետական բյուջեի կատարման վերաբերյալ Հաշվեքննիչ պալատի եզրակացություն	●

Որքանո՞վ է համապարփակ բյուջետային առանցքային փաստաթղթերի բովանդակությունը, որոնք Հայաստանում հասանելի են հանրությանը:

Հիմնական
բյուջետային
փաստաթուղթ

Փաստաթղթի նպատակը և բովանդակությունը

Գնահատման
բյուջետային
տարին

Փաստաթղթի
բովանդակության
գնահատականը

61-100 / 100

41-60 / 100

1-40 / 100

Նախարարության բյուջետային ուղերձ (ՄԺԾԾ)	Ներկայացնում է հարկաբյուջետային քաղաքականության ընդհանուր պարամետրերը նախքան բյուջեի նախագծի ներկայացումը, ընդհանուր գծերով տալիս է կառավարության տնտեսական կանխատեսումները, ակնկալվող եկամուտները, ծախսերը և պարտքը	2021	100
Գործադիր բյուջետային առաջարկ (պետական բյուջեի նախագիծ)	Գործադիր կողմից ներկայացվում է օրենսդիր մարմին հաստատման, մանրամասնում է եկամուտների աղբյուրները, հատկացումները նախարարություններին, առաջարկվող քաղաքականության փոփոխությունները, և երկրի ֆինանսական վիճակը հասկանալու համար կարևոր այլ տեղեկություններ	2021	63
Հաստատված բյուջե	Օրենսդիր մարմնի կողմից հաստատված բյուջեն	2021	89
Քաղաքացու բյուջե	Պետական բյուջեի նախագծի կամ Հաստատված բյուջեի ավելի պարզ և պակաս տեխնիկական տարբերակը, որը նախատեսված է հանրությանը պետական բյուջեի վերաբերյալ հիմնական տեղեկությունները փոխանցելու համար	2020 ուշ է հրապարակվել	
Եռամսյակային կատարման հաշվետվություններ	Ներառում է տեղեկատվություն տարբեր ժամանակահատվածների ընթացքում փաստացի հավաքագրված եկամուտների, փաստացի կատարված ծախսեր և առաջացած պարտքերի վերաբերյալ. հրապարակվում է եռամսյակային կամ ամսական պարբերականությամբ	2020	85
Կիսամյակային հաշվետվություն	Բյուջետային տարվա կեսին բյուջեի կատարման համապարփակ գնահատում. ներառում է տնտեսական կանխատեսումների գնահատում և բյուջետային վերջնական արդյունքների թարմացված կանխատեսում.	2020	Հի պատրաստվում

Պետական
ան
բյուջեի
կատար
ման
տարեկ
ան
հաշվետ
վություն

Նկարագրում է կառավարության ֆինանսական վիճակը բյուջետային տարվա վերջում, և լավագույն դեպքում, գնահատում է քաղաքական նպատակներին հասնելու հարցում ձեռք բերված առաջընթացը

74

Պետական բյուջեի
կատարման խտրական
հաշվետվության
վերաբերյալ հաշվեքննիչ
պալատի
եզրակացություն

Մշակվում է բարձրագույն հաշվեքննիչ հաստատության կողմից. փաստաթղթում հաշվեքննության է ենթարկվում կառավարության տարեվերջյան ֆինանսների հավաստիությունը և ամբողջականությունը:

2019

48

Առաջարկություններ

Բյուջեի թափանցիկությունը բարելավելու համար
Հայաստանը պետք է առաջնահերթություն տա հետևյալ
գործողություններին

- Միշտ ժամանակին առցանց հրապարակել Քաղաքացու բյուջեն:
Հետագուովող ժամանակահատվածում (2020թ.) Քաղաքացու բյուջեն
հրապարակվել է բյուջեի հաստատումից հինգ ամիս անց: Հետագայում
Քաղաքացու բյուջեն հրապարակվել է ժամանակին.
- Պատրաստել և ժամանակին առցանց հրապարակել կիսամյակային
հաշվետվությունը.
- Ավելի համապարփակ դարձնել պետական բյուջեի կատարման վերաբերյալ
Հաշվեքննիչ պալատի եզրակացությունը՝ հրապարակելով ֆինանսական
հաշվեքննությունների ամփոփագիր և արտաբյուջետային միջոցների բոլոր
հաշվեքննությունների արդյունքները.
- Բյուջետային բոլոր փաստաթղթերում հավաքագրվելիք և հավաքագրված
եկամուտները ներկայացնել մեքենայարկելի (machine-readable)
ֆորմատում՝ ըստ նրանց աղբյուրների և յուրաքանչյուր աղբյուրի
տեսակների.
- Բյուջեի նախնական գնահատումներում Բյուջետային փաստաթղթերում և
նրանց հավելվածներում առկա տերմինների բացատրության և
պարզաբանման համար այդ փաստաթղթերում տեղադրել բառարաններ
(glossary).
- Պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը և դրա
վերաբերյալ Հաշվեքննիչ պալատի եզրակացությունը հրապարակել
իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական
կայքում՝ <https://e-draft.am>

Հանրային մասնակցություն

ԲԲՀ-ը գնահատում է հանրությանը բյուջետային գործընթացի տարբեր փուլերում բովանդակալից մասնակցությունն ապահովող օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հնարավորությունները: Այն ուսումնասիրում է կառավարության գործադիր, օրենսդիր և բարձրագույն հաշվեքննիչ հաստատության գործելակերպը՝ օգտագործելով 18 վիճակագրական հավասար կշիռ ունեցող ցուցիչներ, որոնք համահունչ են հարկաբյուջետային քաղաքականությանը հանրային մասնակցության գլոբալ նախաձեռնության սկզբունքներին ([Principles of Public Participation in Fiscal Policies](#)) և գնահատում է յուրաքանչյուր երկիր 0-100 սանդղակով:

Հանրային մասնակցության ոլորտում Հայաստանն ունի 66 միավոր (100 միավորից):


Հանրային մասնակցությունը Հայաստանում՝ այլ երկրների համեմատ

Համաշխարհային միջինը	14
Վրաստան	44
Ռուսաստան	48
Ղրղզստանի Հանրապետություն	26
Մոնղոլիա	13
Ղազախստան	9
Հայաստան	6
Տաջիկստան	0
Թուրքիա	0

0 61 100
Անբավարար Բավարար

Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս [here](#) հանրության մասնակցության նորարարական գործելակերպերն ամբողջ աշխարհում:

Բյուջետային գործընթացին հանրության մասնակցության հնարավորությունների ծավալը



Առաջարկություններ

Բյուջետային գործընթացում հանրային մասնակցության հետագա ամրապնդման համար՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը պետք է առաջնահերթություն տա հետևյալ գործողություններին:

- Արմատապես կատարելագործել գործող կանոնակարգերը՝ բյուջեի ձևակերպման ժամանակ հանրությանը ներգրավելու և բյուջեի կատարման մոնիտորինգի փորձնական մեխանիզմների կիրառման նպատակով:
- Ակտիվորեն համագործակցել խոցելի և թերներկայացված համայնքների հետ՝ ուղղակիորեն կամ նրանց ներկայացնող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջոցով:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը (ԱԺ) հաստատել է տարեկան բյուջեի հաստատմանն առնչվող հայտերը, սակայն պետք է առաջնահերթություն տա նաև հետևյալ գործողություններին:

- Նախքան բյուջեի հաստատումը՝ նրա նախագծի վերաբերյալ լսումների ժամանակ հնարավորություն տալ հասարակության ցանկացած անդամի կամ քաղաքացիական հասարակության ցանկացած կազմակերպության ներկայացնել իրենց առաջարկները և փաստարկները ԱԺ մշտական հանձնաժողովներում:
- Հասարակության կամ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների անդամներին հնարավորություն տալ ներկայացնել ԱԺ-ում պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ Հաշվեքննիչ պալատի եզրակացության լսումների ժամանակ իրենց առաջարկները և փաստարկները:

Հայաստանի Հանրապետության Հաշվեքննիչ պալատը բյուջետային գործընթացում հանրային մասնակցությունը բարելավելու համար պետք է առաջնահերթություն տա հետևյալ գործողություններին:

- Հանրության համար մշակել պաշտոնական մեխանիզմներ՝ օժանդակելու իր հաշվեքննության տարեկան ծրագրի և եզրակացությունների մշակմանը.

Բյուջեի վերահսկողություն



ԲԲՀ-ն ուսումնասիրում է նաև օրենսդիր մարմինների և բարձրագույն հաշվեքննիչ հաստատությունների դերը բյուջետային գործընթացում և նրանց կողմից այդ գործընթացի նկատմամբ վերահսկողության աստիճանը: Յուրաքանչյուր երկիր գնահատվում է 0-ից 100 սանդղակով՝ հիմնված 18 հավասար վիճակագրական կշիռ ունեցող ցուցանիշների վրա: Բացի այդ, հետազոտությունը լրացուցիչ տեղեկություն է հավաքում անկախ ֆիսկալ հաստատությունների վերաբերյալ (տե՛ս Ներդիրը):

Հայաստանի օրենսդիր մարմինը և բարձրագույն հաշվեքննիչ հաստատությունը միասին ապահովում են բյուջետային գործընթացի նկատմամբ սահմանափակ վերահսկողություն՝ ստանալով վերահսկողության համար 50 բաղադրյալ միավոր (100-ից): Առանձին վերցրած՝ յուրաքանչյուր հաստատության վերահսկողության աստիճանը ներկայացված է ստորև.

Օրենսդրական

Հաշվեքննիչ վերահսկողություն

վերահսկողություն



0–40: թույլ

41–60: սահմանափակ

61–100: բավարար

Առաջարկություններ

ՀՀ Ազգային ժողովը ապահովում է պատշաճ վերահսկողություն բյուջեի ցիկլի պլանավորման փուլում և թույլ վերահսկողություն՝ կատարման փուլում: Վերահսկողությունը բարելավելու համար՝ պետք է առաջնահերթ լինեն հետևյալ գործողությունները.

- Մշտական հանձնաժողովները պետք է ուսումնասիրեն գործադիրի առաջարկած բյուջեի նախագիծը և առցանց հրապարակեն հաշվետվություններն՝ իրենց վերլուծություններով
- Մշտական հանձնաժողովները, որոնք ուսումնասիրում են տարվա ընթացքում բյուջեի կատարումը, պետք է առցանց հաշվետվություններ հրապարակեն՝ իրենց բացահայտումներով:
- Երաշխավորել, որ գործադիրը գործնականում խորհրդակցում է օրենսդիր մարմնի հետ՝ նախքան ինքն արդեն հաստատված բյուջեի միջոցները կվերաբաշխի գերատեսչական միավորների միջև, կծախսի ցանկացած չնախատեսված եկամուտ կամ բյուջետային տարվա ընթացքում եկամուտների պակասի պատճառով կկրճատի ծախսերը:
- Հաշվեքննիչ պալատի եզրակացությունն ուսումնասիրող մշտական հանձնաժողովները պետք է առցանց հրապարակեն զեկույցներ իրենց բացահայտումներով և առաջարկություններով:

•

Իր անկախությունն ամրապնդելու և աուդիտորական վերահսկողությունը բարելավելու նպատակով Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատին առաջարկվում են հետևյալ գործողությունները.

- Ապահովել, որ Հաշվեքննիչ պալատը, որպես բարձրագույն հաշվեքննիչ հաստատությունն ունենա համապատասխան ֆինանսավորում իր գործառույթները կատարելու համար՝ համաձայն անկախ մարմնի որոշման (օրինակ՝ օրենսդիրը կամ դատական մարմինը):
- Ապահովել, որ հաշվեքննության նկատմամբ վերահսկողություն անկախ գործակալության կողմից:

Անկախ ֆիսկալ հաստատությունների ստեղծման ձևավորվող գործելակերպը

Հայաստանը չունի անկախ հարկաբյուջետային հաստատություն (ԱՀՀ): ԱՀՀ-ները գնալով ավելի են ճանաչվում որպես բյուջետային գործընթացի ընթացքում գործադիրին և/կամ խորհրդարանին արժեքավոր անկախ և անկողմնակալ տեղեկատվություն տրամադրողներ:

**Այս ցուցանիշները *չեն* գնահատվում բաց բյուջեի հետազոտության մեջ:*

Հետազոտության Մեթոդաբանությունը

2021թ. ԲԲՀ-ում գնահատվել են միայն այն փաստաթղթերը, որոնք հրապարակվել են մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը և մինչ այդ ժամկետը տեղի ունեցած իրադարձությունները, գործունեությունը կամ զարգացումները::

- Հետազոտությունը հիմնված է յուրաքանչյուր երկրում անկախ բյուջետային փորձագետի կողմից լրացված հարցաշարի վրա.
Վարուժան Հոկտանյան, Սոնա Այվազյան
Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
հասարակական կազմակերպություն

varuzh@transparency.am; sona@transparency.am

- Հետազոտության արդյունքների ստուգման նպատակով յուրաքանչյուր երկրի լրացված հարցաշարի նախագիծն այնուհետև գրախոսվում և վավերացվում է անանուն անկախ փորձագետի կողմից, ինչպես նաև, Հայաստանի պարագայում, ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցչի կողմից:.